Արմինե Զոհրաբյան
Պատմական գիտությունների թեկնածու

Հայաստանի պատմության թանգարան
zohrabyanarmine@yahoo.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆԸ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, Հնությունների պահպանության պետական կոմիտե, պեղումներ, հնագիտական հավաքածուներ, Կարո Ղաֆադարյան, հնագետներ, հնագիտական հուշարձաններ

Հնագիտության բաժինը Հայաստանի պատմության թանգարանի հիմնադիր բաժիններից է և գործում է ստեղծման օրից:

Բաժնի հիմքը Կովկասի Հայոց Ազգագրական ընկերության թանգարանի հավաքածուն էր, որը 1921–1922 թթ. Թիֆլիսից փոխադրվեց Երևան: Հավաքածուն ներկայացված էր Ե. Լալայանի կողմից պեղված հուշարձանների (Սևանի ավազան, Արարատյան դաշտ, Նախիջևանի և Շարուր-Դարալագյազի գավառներ) Ք.ա. 4-րդ 1-ին հազարամյակի գտածոներով:

1920–1930 թթ. կարելի է համարել հնագիտական բաժնի ձևավորման և հնագիտական առարկաների կուտակման ժամանակաշրջան, որոնք, հիմնականում ձեռք են բերվել Հնությունների պահպանության կոմիտեի և մասնավոր անձանցից գնման կամ նվիրատվության միջոցով: 1920–30-ական թթ. հնագիտության բաժնի հավաքածուների մաս էր կազմում նաև դրամագիտական նյութը, որը հիմնականում ձեռք էր բերվում գնումների միջոցով: Այդ թվականներին թանգարանը չուներ առարկաների վերականգնման առանձին լաբորատորիա և ռեստավրատոր Թ. Քալանթարյանը համարվում էր Հնագիտության բաժնի աշխատակից:

Թանգարանի հնագիտական հավաքածուի ստեղծման համար բացառիկ նշանակություն ունեցավ 1926 թ. Ն. Մառի արշավախմբի՝ Անի մայրաքաղաքի պեղումներով հայտնաբերված առարկաների տեղափոխումը Հայաստանի պատմության թանգարան, որոնք 1918 թ. փրկվել էին հնագետ Աշխ. Քալանթարի ջանքերով և պահվում էին Սանահինի վանքում: Թանգարանի ղեկավարությունը, պայմանավորվածություն ձեռք բերելով Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգ) Նյութական մշակույթի Ակադեմիայի և Պետական Էրմիտաժի հետ, Հոկտեմբերյան մեծ հեղափոխության 13-րդ տարեդարձի առթիվ 1930 թ. Լենինգրադ է ուղարկում Անիի ցուցանմուշները՝ Էրմիտաժում ցուցադրելու և դրանց մի մասը ռեստավրացիայի ենթարկելու նպատակով: Անիի իրերը հնագիտական բաժինը հետ է ստանում 1933 թ., իսկ 1935 թ., Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի առթիվ, Անիի

* Ստացվել է 12.02.2025 թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025 թ.:

նյութերի հիման վրա բացվում է ցուցադրություն՝ «Հայաստանի ֆեոդալական շրջանը», որտեղ առանձին անգամ հանրությանը ներկայացվեց նաև Անի քաղաքի մակետը, որն այժմ էլ ՀՊԹ-ի մշտական ցուցադրության մաս է կազմում: Այդ ցուցահանդեսը մեծ ոգևորությամբ է ընդունվել ժողովրդի կողմից և ունեցել է այցելուների ռեկորդային թիվ, որի մասին վկայում են այցելուների գրառումները՝ արված թանգարանի տպավորությունների գրքում: Այս ցուցադրությունը, ասես կորցրած հայրենիքը վերագտնելու, դարավոր մշակույթի ակունքները մոռացությունից հանելու հնարավորություն լիներ:

1931 թ. հնագիտական բաժինը ՀԽՍՀ Լուսժողկոմի կարգադրությամբ Հնության պահպանության կոմիտեից ստանում է վերջինիս գիտաշխատողների կողմից կատարած պեղումների և գիտարշավների ընթացքում ժողոված հավաքածուն, որը բաղկացած էր 790 տարաբնույթ հնագիտական առարկաներից և 1155 դրամից: Լուսժողկոմի կարգադրությամբ լուծարքի է ենթարկվում Էջմիածնի թանգարանը, որի ժողովածուից 1931 թ. հնագիտական բաժինը ստանում է 872 առարկա և 2200 դրամ: Արժեքավոր ձեռքբերում էր նաև Նոր Նախիջևանից տեղափոխած հավաքածուն, որի նախաձեռնողը Երվանդ Շահազիզն էր:

1931 թ. հնագիտական բաժինը Կուլտուրայի տան երկրորդ հարկում ստանում է չորս սենյակ և մի միջանցք, ուր առաջին անգամ Հայաստանի խորհրդայնացման 10-ամյակի առթիվ կազմակերպում է իր ցուցադրությունը՝ բաղկացած երկու մասից: Առաջին մասը ներկայացնում էր մարդու ծագումը և այդ շրջանի աշխատանքային գործիքները, ուր ցուցադրված էքսպոնատները հիմնականում գիպսից պատճեններ կամ նկարներ էին՝ ստացված Լենինգրադից (Սանկտ-Պետերբուրգ), իսկ 1935 թ. պրոֆ. Կրաֆորդը Անգլիայից պատմության թանգարանին նվեր ուղարկեց պալեոլիթի շրջանի գործիքներ: Միայն 1931 թ. Արզնիի մոտ գտնվեցին քարեդարյան աշխատանքային գործիքներ, որոնք զետեղվեցին առաջին ցուցադրությունում:

1939 թ. «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում Հայաստանի պատմության թանգարանում բացվում է ցուցահանդես, որտեղ գեղարվեստական գործերի հետ ցուցադրվում է հնագիտության բաժնի միջնադարյան նյութը՝ հայտնաբերված Անիից և Դվինից:

1930-ական թթ. սկսած թանգարանի կողմից ծրագրվում և իրականացվում են Հայաստանի հուշարձանների լայնամասշտաբ սիստեմատիկ ուսումնասիրություններ: Նյութերի քանակը կտրուկ աճում է՝ շնորհիվ կանոնավոր պեղումների, որոնք իրականացվում էին թանգարանի գիտական արշավախմբերի կողմից՝ սկսած 1936–1937 թթ.: Թանգարանի բազմաթիվ արշավախմբերի միջոցով այն համալրվել է մեծաքանակ նյութերով, որոնք ունեն բացառիկ գիտական և մշակութային նշանակություն: Թանգարանի հնագիտական արշավախմբերի կողմից պեղվել են մարդկային քաղաքակրթության տարբեր ժամանակաշրջանները ներկայացնող համբավավոր հուշարձաններ՝ Շենգավիթ, Շրեշ Բլուր, Դվին, Կարմիր Բլուր, Լճաշեն, Ջրառատ, Արմավիր, Վանաձոր, Գոլովինո, Արթիկ, Հառիճ և այլն, որոնք նոր էջ բացեցին ոչ միայն Հայաստանի, այլև տարածաշրջանի հնագիտության մեջ: Տասնամյակների ընթացքում թանգարանի աշխատակիցների կողմից

պեղված նյութերը, համալրելով հավաքածուները, այսօր հնարավորություն են ընձեռում ցուցադրությունների միջոցով ներկայացնել Հայկական լեռնաշխարհում պատմության և մշակույթի զարգացման ողջ ընթացքը՝ Հին քարի դարից մինչև ուշ միջնադար (Ք.ա. 2000000/800000 թթ. մինչև 16-րդ դարի վերջը):

Հայկական բազմադարյան մշակույթը արտասահմանյան տարբեր երկրներում ներկայացվում է հիմնականում հնագիտական հավաքածուների միջոցով: Իր գոյության ավելի քան մեկդարյա պատմության ընթացքում հնագիտության բաժինը մի քանի տասնյակ ցուցահանդեսներ է բացել աշխարհի զանազան երկրներում:

1990-ական թթ. ի վեր թանգարանի հնագիտության բաժինն արդեն ինքնուրույն պեղումներ չի իրականացնում, չնայած որ բաժնի շատ աշխատակիցներ մասնակցում են ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբերի պեղումներին: Ցավոք, վերջին երկու տասնամյակների ընթացքում մի շարք հուշարձանների պեղածո նյութը, որը դրանց պեղման առաջին իսկ օրվանից ավանդաբար հանձնվել է Պատմության թանգարանի հնագիտության ֆոնդերին, այսօր ցրվում է տարբեր թանգարաններում՝ խաթարելով հնավայրերի հնագիտական ժողովածուները:

Հնագիտական բաժինը մեծապես նպաստել է նոր թանգարանների ֆոնդային հավաքածուների ձևավորմանը՝ մեծ թվով առարկաներ տրամադրելով Հայաստանի տարբեր թանգարաններին: Դրանցից են Կոմունալ թանգարանը (այժմ՝ Երևանի պատմության թանգարան), Կերպարվեստի թանգարանը (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ), Ծաղկաձորի թանգարանը, Լենինականի (այժմ՝ Գյումրու թանգարան), «Էրեբունի» թանգարանը, Սարդարապատի ազգագրության թանգարանը, Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը:

Բաժնի մասնագետների գիտական ուսումնասիրությունները հրապարակված են մենագրություններով և հոդվածներով: Թանգարանի հնագիտական ֆոնդի համալրման, ուսումնասիրման և հրատարակության գործում մեծ ավանդ ունեն վաստակաշատ գիտնականներ Ե. Լալայանը, Եվ. Բայբուրդյանը, Կ. Ղաֆադարյանը, Մ. Հասրաթյանը, Հ. Մնացականյանը, Բ. Շելկովնիկովը[1], Բ. Պիոտրովսկին, Տ. Խաչատրյանը, Ս. Եսայանը, Է. Խանզադյանը, Եվ. Մուշեղյանը և ուրիշներ: Թանգարանում են սկսել իրենց աշխատանքային գործունեությունը կամ մասնագիտացել հնագետներ Ս. Բարխուդարյանը, Բ. Առաքելյանը, Է. Խանզադյանը, Ստ. Եսայանը, Մ. Իսրայելյանը, Լ. Բարսեղյանը, Ս. Դևեջյանը, Ա. Ժամկոչյանը, Լ. Կարապետյանը, Ս. Ամիրյանը, Հ. Եսայանը:

ԽՍՀՄ կառավարության որոշումներով հնագիտական առարկաներ են տրամադրվել Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Թբիլիսիի, Բաքվի թանգարաններին:

---

[1] Միջնադարի հնագիտության հայտնի մասնագետ Բեհբութ Ալեքսանդրի Շելկովնիկովը (Շելկովնիկովյան) հայազգի անվանի գեներալ, ռուս-թուրքական պատերազմների մասնակից Բ. Շելկովնիկովի թոռն է: Հայրն անվանի կենսաբան Ալեքսանդր Շելկովնիկովը Երևանի բուսաբանական այգու և բնության թանգարանի հիմնադիրն է:

Հնագիտության բաժնի վարիչները

Տարբեր ժամանակներում բաժինը տարբեր անվանումներ է ունեցել՝ Պատմա-հնագիտական, Հնագիտության, Հին և միջին դարերի: Եթե 1920-ական թթ. այն կոչվում էր հնագիտության սեկտոր, ապա 1930-ական թթ., երբ պատմության թանգարանի հիմնական խնդիրն է դառնում ոչ թե պարզապես նյութեր հավաքելը, այլև հայ ժողովրդի դարավոր պատմությունը ներկայացնելը, բաժինը սկսում է կոչվել պատմա-հնագիտական:

Բաժնի առաջին ղեկավարը դարձավ անվանի հնագետ և ազգագրագետ Ե. Լալայանը՝ միաժամանակ այն համատեղելով թանգարանի տնօրենի և ազգագրության բաժնի վարիչի պարտականությունների հետ:

1926 թ. Երևան է տեղափոխվում Ռուսաստանի հասարակական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտների ասոցիացիայի Արևելքի ժողովուրդների էթնիկ և ազգային մշակույթների ինստիտուտի ասպիրանտ, հնագետ Եվգենի Բայբուրդյանը: Նա նշանակվում է Հայաստանի պատմության թանգարանի պատմահնագիտական բաժնի հնագիտության սեկտորի վարիչ:

1939 թ. Եվ. Բայբուրդյանը ձերբակալվել է և, ըստ տարբեր տեղեկությունների, 1941 թ. կամ մահացել է բռնադատվածների համակենտրոնացման ճամբարում, կամ գնդակահարվել է: Նա գլխավորել է թանգարանի հնագիտության բաժինը 1928–1933 թթ. և 1937–1939 թթ.՝ մինչև իր ձերբակալությունը:

Եվ. Բայբուրդյանի նախաձեռնությամբ սկսվել է թանգարանի հնագիտական ժողովածուների համալրումը արդեն ոչ թե պատահական գտածոներով, այլ ծավալուն հնագիտական պեղումների միջոցով: Եվ. Բայբուրդյանը, հանդիսանալով նաև Հնությունների պահպանության կոմիտեի աշխատակից, մասնակցել է տարբեր հնավայրերի հայտնաբերման և նախնական ուսումնասիրության աշխատանքներին: 1930-ական թթ. նա այլ հնագետների հետ հետախուզական աշխատանքներ և պեղումներ է կատարել հնագիտական շատ հուշարձաններում՝ Էլար, Մուխաննաթ-թափա, Կարմիր բերդ, Ավան, Առինջ, Պտղնի, Արմավիր բլուր, Սև բլուր, Շրեշ բլուր, Մոխրաբլուր, Թագավորանիստ: Եվ. Բայբուրդյանը Աշխարհբեկ Քալանթարի հետ մասնակցել է Գյումրու և Վաղարշապատի պեղումներին, Սմբատ Տեր-Ավետիսյանի հետ Դվինի պեղումներին, Կարո Ղաֆադարյանի հետ Վանաձորում հաշվառել է հնագիտական հուշարձանները, մասնակցել է Ծովինարի ամրոցի և Արագածի կիկլոպյան ամրոցների ուսումնասիրությանը՝ Բ. Պիոտրովսկու հետ: Եվ. Բայբուրդյանի անմիջական նախաձեռնությամբ իրականացված պեղումները Մուխաննաթ-թափայում և Շենգավիթում դարձան սկզբնակետ ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Կովկասի Բրոնզի դարաշրջանի հնագիտության համար (Бадалян, 2011, 5–6):

Հնագիտության բաժնի վարիչ Ասլան Շահնազարյանը եղել է Դվինի արշավախմբի մասնակից: Նա հեղինակել է «Դվինի պատմաաշխարհագրական ակնարկ» գիրքը, որն առ այսօր չի կորցրել իր գիտական նշանակությունը: 1920–30-ական թթ. հնագիտության բաժնի մաս էր կազմում դրամագիտական ժողովածուն: 1946 թ. դրամագիտության բաժինը առանձնանում է հնագիտության բաժնից: Ա.

Շահնազարյանը, որը հնագիտության բաժնի վարիչն էր, ելնելով իր նախասիրություններից, դառնում է դրամագիտության բաժնի վարիչ, իսկ թանգարանի տնօրեն Կ. Ղաֆադարյանը ստանձնում է նաև հնագիտության բաժնի վարիչի պարտականությունները:

Երկար տարիներ հնագիտության բաժինը ղեկավարել է Հ. Մնացականյանը: 1933 թվականին Հ. Մնացականյանն ավարտել է Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմագրական ֆակուլտետը: 1938 թվականին նա պաշտպանել է «Արևապաշտության հետքերը Հին Հայաստանում» թեմայով ատենախոսությունը՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

1938–1947 թթ. Հ. Մնացականյանը մասնակցել է թանգարանի հնագիտական տարբեր արշավախմբերին (Դվին, Կարմիր Բլուր, Գառնի և այլն), 1947–1956 թթ. Հայաստանի տարբեր հատվածներում՝ հնավայրերի փրկարարական պեղումներին (Վարդենիս, Օշական, Արթիկ, Ստեփանավան, Ջոլաքար, Այրում, Դիլիջան և այլն): 1956–1974 թթ. Հ. Մնացականյանը գլխավորեց Լճաշենի պեղումները, որոնց արդյունքներն աննախադեպ էին տարածաշրջանի և միջազգային հնագիտության համար: Լճաշենում պեղվել են դամբանադաշտեր, բնակատեղիներ և կիկլոպյան ամրոցի հատվածներ: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Լճաշենի առաջին տեղամասում, ամրոցի հարևանությամբ տեղորոշվող, լճի ջրերից ցամաքած հատվածներում բացված անվավոր փոխադրամիջոցներ պարունակող դամբանաբլուրները, որոնք ներկայացնում են բրոնզեդարյան հասարակության էլիտային: Այս դամբանաբլուրները պահպանվածությամբ և առարկաների պարունակությամբ բացառիկ են ոչ միայն Հայաստանի, այլև՝ ողջ տարածաշրջանի համար: Հ. Մնացականյանի հնագիտական գործունեությունը Լճաշենում կրում էր փրկարարական բնույթ, քանի որ պեղումներից հետո ջրերից ազատված տարածքներն անմիջապես սկսեցին կառուցապատվել:

Հ. Մնացականյանի գործունեության շնորհիվ համալրվեց Հայաստանի և հարակից տարածքների բրոնզ-երկաթեդարյան հնագիտության աղբյուրագիտական հենքը: Լճաշենի բրոնզեդարյան դամբանադաշտից գտնված բացառիկ պահպանվածության իրերը հայտնաբերման պահից ի վեր Հայաստանի պատմության թանգարանի հիմնական ցուցադրության նմուշներն են (Վարդանյան 2022, 498–474):

1968–71 թթ. հնագիտության բաժնի վարիչ է եղել պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Տ. Խաչատրյանը, որը եղել է Արթիկի և Հառիճի հնագիտական արշավախմբի ղեկավարը: Նրա ուսումնասիրությունները Շիրակի բրոնզեդարյան հնագիտության ասպարեզում այսօր էլ մնում են խիստ արդիական:

1973 թ. Հին և միջին դարերի բաժինը վերածվում է երկու բաժնի՝ ա) Տոհմատիրական և ստրկատիրական հարաբերությունների բաժին, իսկ ավելի ուշ՝ Նախնադարյան համայնական կարգերի և ստրկատիրական հասարակարգի բաժին, բ) Հայաստանի միջնադարյան պատմության բաժին, իսկ 1977 թ.՝ Ֆեոդալական հասարակարգի պատմության բաժին: Իր ստեղծման առաջին իսկ պահից միջնադարի բաժինը ղեկավարել է պատմական գիտությունների թեկնածու Եվգենիա Մուշեղյանը, ով ղեկավարեց այն մինչև 1989 թ.: Եվգ. Մուշեղյանը միջնադարի

հնագիտության խոշոր մասնագետներից էր: Նա կազմել է Հայաստանի պատմության թանգարանում պահվող Անիի հավաքածուի և արձանագիր առարկաների հատկանշական ցուցակները:

Ավելի վաղ շրջանի հնագիտությունն ուսումնասիրող բաժինը, որը ներառում էր քարի դարից անտիկ ընկած ժամանակաշրջանը, ղեկավարել են Ս. Հմայակյանը, Ա. Փիլիպոսյանը և Լ. Խաչատրյանը: 1989 թ. հին և միջնադարի բաժինները նորից միավորվում են և կոչվում Հնագիտության բաժին, իսկ վարիչ է նշանակվում Լ. Խաչատրյանը:

Հնագիտության բաժնի վարիչները

Երվանդ Լալայան – 1920–1928 թթ.
Եվգենի Բայբուրդյան – 1928–1933 թթ., 1937–1939 թթ.
Ասլան Շահնազարյան – 1933 – 1936 թթ., 1944 – 1946 թթ.
Փայլակ Գրիգորյան 1939 – 1941 թթ.
Հռիփսիմե Ջանփոլադյան – 1941 թ.
Վալենտինա Աբրահամյան – 1941 թ.–1942 թ. փետրվար
Կարապետ Ղաֆադարյան – 1946–1947 թթ.
Հարություն Մնացականյան – 1948–1968 թթ., 1971–1974 թթ.
Տելեմակ Խաչատրյան – 1968–1971 թթ.
Սիմոն Հմայակյան – 1975–1979 թթ.
Աշոտ Փիլիպոսյան – 1980–1982 թթ.
Լյուդվիգ Խաչատրյան – 1983–2020 թթ.
Հասմիկ Սիմոնյան – 2021–2022 թթ.
Աստղ Պողոսյան – 2023 թ. առ այսօր:

Արմֆանի նախագահության 1942 թ. հունվարի որոշմամբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ամենածանր տարիներին՝ 1942–1943 թթ. հնագիտության բաժնի վարիչի պաշտոնը վերացել է և վերականգնվել միայն 1945 թ.:

Հնագիտական ցուցադրությունը

1943 թ. որոշվում է իրականացնել նոր ցուցադրության պլանը: «Հայաստանի մշակույթը սկզբից մինչև գրերի գյուտը» վերնագրված բաժինը կազմակերպելու պատասխանատվությունը դրված էր Բ. Պիոտրովսկու և Հ. Ջանփոլադյանի վրա, իսկ 5–7-րդ դարերի հատվածը՝ Վ. Աբրահամյանի վրա:

Հնագիտության ֆոնդերի կառուցվածքը

Հնագիտական տասը ֆոնդերը (7-ը խեցեղենի և քարի, 1-ը հնագիտական մետաղի, 1-ը՝ հնագիտական թանկարժեք մետաղի, 1-ը՝ մարդաբանական) ներառում են հավաքածուներ, որոնք ներկայացնում են Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային զարգացման ամբողջական ընթացքը՝ հին քարի դարից մինչև ուշ միջնադար ընկած ժամանակաշրջան (Ք.ա. 1 միլիոնից մինչև Ք.հ. 15-րդ դ.): Գիտական մեծ արժեք է ներկայացնում մարդաբանական ֆոնդը, որտեղ հավաքված է տարբեր հնավայրերի պեղումներով հայտնաբերված հնամարդաբանական նյութը: 1930–40-ական թթ. հնագիտության բաժնի աշխատակիցները թանգարան են

տեղափոխել բացառիկ գիտամշակութային արժեք ներկայացնող սեպագիր, արամերեն, հունարեն, լատիներեն, հայերեն արձանագրություններ, ինչպես նաև քարե կոթողներ, ճարտարապետական քանդակազարդ դետալներ, որոնք առ այսօր անփոխարինելի են թանգարանում Հայաստանի գրային մշակույթը, հայկական անտիկ և միջնադարյան քանդակը ներկայացնելու համար:

Հնագիտական արխիվը հարուստ է տարբեր հուշարձանների չափագրություններով, որոնց հեղինակը հիմնականում թանգարանի ճարտարապետ Գր. Քոչոյանն է: Այստեղ են պահվում նաև անվանի հնագետներ Ս. Տեր-Ավետիսյանի, Ա. Քալանթարի, ճարտարապետ Ն. Բունիաթյանի արխիվները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1948 – Ղաֆադարյան Կ., Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո (Համառոտ ակնարկ), *Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի*, Երևան, 1948, № 1, 9–65:

Հ. Մնացականյանի անձնական գործ, ՀՊԹ ֆ. № 1, ց. 6, գ. №297, 54:

ՀՊԹ արխիվ, ց. 6, գ. 45, 49, 51, 65, 67, 73:

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022 – Վարդանյան Բ., Հարություն Մնացականյան. նյութեր հնագիտական և հուշարձանապահպանական գործունեության վերաբերյալ, *Ծովային Հայաստան. Ուդուրի-Էթիունի երկրի հնագիտական ժառանգությունը*, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, Կալիֆորնիայի համալսարանի Քոթսենի անվան հնագիտության ինստիտուտ, խմբ.՝ Մ. Բաղալյան, Ք. Մարտիրոսյան-Օլշանսկի, Ա. Բոբոխյան, Երևան, ՀԱԻ հրատ., 2022, 498–474:

ՔԵՇԻՇՅԱՆ 2009 – Քեշիշյան Մ., *Կյանքի չգրված էջեր. Հարություն Հովակիմի Մնացականյան, կենսագրական*, Երևան, 2009:

ԼՐԱԲԵՐ 2021 – Биографии ученых в документах, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2021, № 3, էջ 280–292:

БАЙБУРТЯН 2011 - Байбуртян Е., *Последовательность древнейших культур Армении на основании археологического материала*, Ереван, 2011:

Armine Zohrabyan
PhD in History
History Museum of Armenia
zohrabyanarmine@yahoo.com

Keywords: History Museum of Armenia, Committee of protection of Armenian antiquities, excavations, archaeological collections, Karo Ghafadaryan, archaeologists, archaeological sites

The Department of Archaeology is one of the founding departments of the History Museum of Armenia, the first collections of which were formed on the basis of objects discovered during the excavations of Yervand Lalayan. In the 1930s, regular excavations began in Soviet Armenia, which were carried out by researchers of the museum in Dvin, Karmir Blur, Shengavit, etc. Many archaeologists acquired their professional skills in the Department of Archaeology: Evg. Bayburdyan, K. Ghafadaryan, H. Mnatsakanyan, H. Janpoladyan, S. Yesayan, E. Khanzadyan, S. Devedjyan, A. Zhamkochyan, T. Khachatryan, Evg. Musheghyan, S. Hmayakyan, A. Piliposyan, etc. Today, the collection of the Department of Archaeology includes about 150 thousand objects found from several dozen archaeological sites of the republic.

Армине Зограбян
Кандидат исторических наук

Музей Истории Армении
zohrabyanarmine@yahoo.com

Ключевые слова: Музей Истории Армении, Комитет по охране древностей Армении, раскопки, археологическая коллекция, Каро Кафадарян, археологи, археологические памятники

Отдел археологии является одним из основополагающих отделов Музея истории Армении, первые коллекции которого были сформированы на основе предметов, обнаруженных раскопками Ерванда Лалаяна. 1930-е годы В Советской Армении начались регулярные раскопки, которые проводили научные сотрудники музея: Двин, Кармир Блур, Шенгавит и др. Многие археологи приобрели свои профессиональные навыки в отделе археологии: Евг. Байбурдян, К. Кафадарян, А. Мнацаканян, Рп. Джанполадян, Ст. Есаян, Э. Ханзадян, С. Деведжян, А. Жамкочян, Т. Хачатрян, Евг. Мушегян, С. Амаякян, А. Пилипосян и другие. Сегодня в коллекции отдела археологии насчитывается около 150 тысяч предметов, найденных из несколько десятка памятников республики.